

<https://doi.org/10.46991/hc.2022.18.2.26>

## Armenian Spiritual Centers and their Cultural Activities in Georgia in the 14-15<sup>th</sup> Centuries

Lilit Melikyan

<https://orcid.org/0000-0003-4455-1907>

Lecturer at the Chair of the History of Armenia's Neighboring Countries

[melikyanlilit@ysu.am](mailto:melikyanlilit@ysu.am)

**Keywords:** Georgia, Saint George Church, school, scriptorium, miniaturist, scribe, colophon, Krtsanis, Pashivank, Bethlehem Church

*The article is devoted to the coverage of the spiritual and cultural life of the Armenian diaspora in Georgia in the 14-15<sup>th</sup> centuries. The study is based on the manuscript sources and documents of Matenadaran named after Mesrop Mashtots. An attempt is made to present the activities of the Armenian spiritual centers, the relations between the Armenian scriptoriums in Georgia and in Armenia, to clarify the personality and activities of the scribes and miniaturists. Special attention was paid to the coverage of the history of the first Armenian school operating in Tiflis.*

### Հայկական հոգևոր կենտրոններն ու դրանց մշակութային գործունեությունը Վրաստանում XIV-XV դարերում

Լիլիթ Մելիքյան

Դասախոս, ԵՊՀ Հայաստանին հարակից երկրների ամբիոն

**Հիմնաբառեր՝** Վրաստան, Սուրբ Գևորգ եկեղեցի, դպրոց, գրչակենտրոն, մանրանկարիչ, գրիչ, ձեռագիր, Կրճանիս, Փաշիվանք, Բեթղեհեմի եկեղեցի:

*Հոդվածը նվիրված է Վրաստանում հայկական գաղթօջախի հոգևոր-մշակութային կյանքի լուսարանմանը XIV-XV դարերում: Ուսումնասիրությունը հիմնված է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր աղբյուրների և վավերագրերի վրա: Փորձ է արվում ներկայացնելու հայկական հոգևոր կենտրոնների գործունեությունը, դրանց կից գրչօջախների ու Հայաստանում գտնվող գրչակենտրոնների փոխառնչությունները, ճշգրտելու գրիչների ու մանրանկարիչների անձն ու գործունեությունը: Հատուկ անդադա է կատարվել Տիֆլիսում գործող հայկական առաջին դպրոցի պատմության լուսարանմանը:*



## Армянские духовные центры и их культурная деятельность в Грузии в XIV-XV вв.

Лилит Меликян

Преподаватель кафедры Истории сопредельных стран Армении

**Ключевые слова:** Грузия, церковь Святого Георгия, школа, скрипторий, миниатюрист, скриптор, рукопись, Крцанис, Пашиванк, Вифлеемская церковь.

*Статья посвящена анализу духовно-культурной жизни армянской колонии в Грузии в XIV-XV веках. Исследование основано на рукописных источниках и документах Матенадарана имени Месропа Маштоца. Автором сделана попытка представить деятельность армянских духовных центров, взаимоотношения армянских скрипториев в Грузии и Армении, выявить личность и деятельность скрипторов и миниатюристов. Особое внимание было уделено освещению истории первой армянской школы, действовавшей в Типхисе.*

\* \* \*

**Ներածություն:** XIV-XV դարերի ընթացքում Վրաստանում հայերի ստվարացմանը զուգահեռ հայ առաքելական թեմի առաջնորդությամբ կազմակերպվում էր հայկական գաղթօջախի կրթամշակութային կյանքը: Տիփլիսը և նրա հարակից բնակավայրերը դարձել էին հայ հոգևոր-մշակութային, կրթական կյանքի ձևավորման ու զարգացման կենտրոններ:

Այս ուսումնասիրությամբ փորձում ենք ցույց տալ XIV-XV դարերում Վրաստանում<sup>1</sup> հայկական հոգևոր կենտրոնների մշակութային միջավայրը և դրանց ձեռագրական ժառանգությունը: Առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել քննարկվող ժամանակաշրջանում կառուցված, սակայն այսօր վրացականացված հայկական եկեղեցիների պատմության առանցքային հարցերի լուսաբանմանը:

Դպրությունը Տիփլիսում: Քննարկվող ժամանակաշրջանում Վրաստանում հայ կրթամշակութային կյանքի վերաբերյալ հետաքրքրաշարժ տեղեկություններ են վկայված 1444 թ. ձեռագիր հիշատակարանում. «ընտրյալ կրոնավոր և անյաղթ փիլիսոփա» տեր Սարգիսը, որը «հրաշափառ Կաթողիկէի» սպասավորն էր և առաջնորդը, նորոգել է տալիս 1293 թ. Սկևռայում ընդօրինկված Ավետարանը. «վերըստին նորոգել ոսկենկար և բազմերանգ գունովք ... Զի յետ ստանալոյ բազում տառից և բազում արդեանց, զոր ունէր յեկեղեցի Աստուծոյ յաւել և զսա ի գանձս աստուածային...» (Հիշ., ԺԵ, Ա, 1955, 574-575):

Ըստ 1436 թ. Կրծանիս գյուղում գրված ձեռագիր հիշատակարանի՝ Տեր Սարգիսը եղել է Կաթողիկէ եկեղեցու ավագերեց (Հիշ. ԺԵ, Ա, 1955, 461-463): Ավագերեցի հիշատակումը ցույց է տալիս, որ տվյալ եկեղեցին ունեցել է հոգևոր սպասավորների խոշոր համայնք՝ տեր Սարգսի գլխավորությամբ: Պ. Մուրադյանը հետևություն է անում, որ խոսքը Սարգսի առաջնորդությամբ կառավարվող Կաթողիկէ, այսինքն՝ ներկայիս առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցու ունեցած հավաքածուն հավելելու մասին է (Եկեղեցու պատմության և

<sup>1</sup> «Վրաստան» անվանումը ստորև գործածվում է Քարթլ-Կախեթի (Արևելյան Վրաստան) թագավորության նշանակման համար:

ճարտարապետության մասին տե՛ս Ջալալեանց, 1858, 60-61; *Амиранашвили*, 1925, 185-186; Մելիքսեթ-Բեկ, 1958, 155-156; Matevosyan, Avetisyan 2015, 17-20; Асратян, 1978, 353-395; Ավչյան, 1959, 47-50; Մուրադյան, 2009, 37): Ըստ Պ. Մուրադյանի՝ հիշատակությունը հուշում է, որ քննարկվող ժամանակաշրջանում Սուրբ Գևորգ եկեղեցուն կից գործել է գրադարան: Սակայն հետազոտողի ուշադրությունից վրիպել է նույն ձեռագրի մեկ այլ տեղեկություն, ըստ որի՝ «անհաղթ փիլիսոփա» Սարգիս կրոնավորը ուներ աշակերտներ. «...և զձեռնասանունդ աշակերտն իւր՝ գորդի պարոն Թումանին զՂուկաս սարկաւագ և հոգևոր եղբարսն իւր զՍտեփանոս քահանայ, և զՇմաւոն քահանայ, և զԿիրակոս քահանայ, և զԱստուածատուր քահանայ, և զմիաչատուր քահանայ...» (Հիշ. ԺԵ, Ա, 1955, 574-575): Նշյալ հիշատակությունը նշմարում է, որ բացի գրադարանից՝ եկեղեցուն կից գործել է հայկական կրթօջախ:

Ի հաստատում այս բացատրության՝ կարելի է վկայակոչել 1452 թ. ձեռագիր հիշատակարանը՝ գրված «ի դրան կամակատար և Սուրբ Աստուածածնիս և Գեորգեա[յ] գորաւարիս» (ՄՄ, Հ<sup>մ</sup> 2156, 496v-497r): Հովհաննես գրչի հաղորդմամբ մատյանի որոշ հատվածներ արտագրել է իր ուսուցիչ Ստեփանոսը, որը հիշատակված է «...զանյաղթ փիլիսոփայ և զսրբասնեալ րաբունապետս» ձևով, ապա Հովհաննեսը հիշատակում է իր ուսուցչի՝ Ստեփանոսի ուսուցչին՝ «...զգերպատիւ և զնրբահայեաց և զգարդարեալն իմաստութեամբ և զբարձրացեալն աստիճանաւ զըստ հոգոյ հայր և զուսուցիչ սորա զԿարապետ րաբունապետ, որ բազում աշխատութեամբ ուսոյց զվարդապետական և զերաժշտական գիտութիւնս» (ՄՄ, Հ<sup>մ</sup> 2156, 496v-497r): Հովհաննեսը հաջորդիվ հաղորդում է իր հոգևոր եղբայրների մասին, որոնք վերջնական տեսքի են բերել մատյանը, որը՝ խազերի, որը՝ այլ միջոցներով: *Ռաբունապետ* կամ *ռաբունների պետ*, այսինքն՝ *ուսուցչապետ* (Աղայան, 1976, 1253) կոչելը փաստում է, որ տեղում գործել է դպրոց, որտեղ բարձր վարդապետական աստիճան ունեցող կրոնավորները դասավանդել են աստվածաբանություն, փիլիսոփայություն, երաժշտություն և գրչություն:

Հետազոտողներից Ա. Ասատրյանը վերոնշյալ ձեռագրում հիշատակվող «Սուրբ Աստուածածին և Գևորգ Զորավարի» եկեղեցին, առանց հավելյալ մեկնաբանության, նույնացնում է «Մողնիի կամակատար Սուրբ Աստուածածնի և Սուրբ Գևորգ գորավար եկեղեցիների հետ» (Ասատրյան, 2016, 16-21): Ուսումնասիրողներից Կ. Մաթևոսյանը հանգամանալիորեն հստակեցրել է Մեյդանի Սուրբ Գևորգ եկեղեցին զույգ եկեղեցիների անունով՝ «Սուրբ Աստվածածին և Սուրբ Գևորգ» անվանակոչելու պատճառները (Matevosyan, Avetisyan, 2015, 17-20): Հեղինակի կողմից ճշգրտվել է նաև, որ XV դարի կեսերին Հաղբատի ու Վրաստանում հայկական թեմի առաջնորդ Ղուկաս արքեպիսկոպոսը Սուրբ Գևորգ եկեղեցուն կառուցել է վեցայուն ռոտոնդայով զանգակատուն, որի մասին վկայություն է պահպանվել 1614 թ. մի հիշատակարանում (Հիշ. ԺԵ, Ա, 1955, 361-362): Ուշագրավ է, որ ձեռագրում Սուրբ Գևորգ եկեղեցին հիշատակվում է «Կաթողիկե Աստուածածնիս»: Հավելենք նաև, որ Մողնիի Սուրբ Աստվածածին ու Սուրբ Գևորգ եկեղեցիները ձեռագրերում հիշատակված են *Մողնի* անվամբ, ինչը վերոնշյալ ձեռագրերում բացակայում է: Ըստ այդմ՝ ձեռագիր հիշատակարաններում հիշատակվող «Սուրբ Աստվածածին և Սուրբ Գևորգ եկեղեցիների» նույնացումը Մողնու եկեղեցիների հետ անհիմն է:

Հայ գրչարվեստը (Տփղիս, Գորի)

Փիլիսոփայությանը, աստվածաբանությանը և երաժշտությանը զուգահեռ XIV դարասկզբից Վրաստանում վերելք է ապրում մանրանկարչական արվեստը: Այսպես՝ ամենավաղ նկարագարողված Ավետարանը թվագրվում է 1300 թվականով (ՄՄ, ձեռ. Հ<sup>US</sup> 5476, 126r): Ավետարանում առկա է փոքր հիշատակություն՝ «[զ]Զաքարիա նկարիչ սուտանուն քահանայ] Տփիսեցի] յիշեայ աղաչեմ վասն Աստուծոյ: Ի թվին ՉԽԹ (1300 թ.): Շտապեցաք ի բազում վշտաց և ի տրտմութեանց: Տերտեր աւագերիցու որդի» (ՄՄ, ձեռ. Հ<sup>US</sup> 5476, էջ 126 r): Ըստ հիշատակության՝ Զաքարիան Տերտեր անունով ավագ երեցի որդին էր: Ուշագրավ է, որ Հաղբատի վանքում պահպանվել են արձանագրություններ, որոնցում վկայված է նույնանուն ավագերեց Տերտերը, որը գործել է Տփղիսում: 1275 թ. արձանագրությունից իմանում ենք, որ Տերտերը Սուրբ Նշան եկեղեցու մոտ կանգնեցրել է խաչքար՝ «ի վերա հանգստարանի Աբրահամի» (Ղաֆաղարյան, 1963, 240): Ըստ 1288 թ. արձանագրության՝ «ՉԼԷ թվիս (1288թ.): Միրովն Ա(ստուծոյ) միաբանեցան ս(ու)րբ ուխտիս Հաղբատայ աւագերեցն Տփիսե(ա)ց Տերտ(ե)րն եւ ամուսին իւր Նազմելիք, հանդերձ որդովք իւրենց եւ ետուն ընծայ ս(ո)ւրբ Նշանիս խաչ մի արծաթի եւ երկու նափորտ, եւ Լ (30) դահեկան: Եւ մեք,տ(ե)ր Յովանէս եւ միաբանքս սահմանեցանք նոցա պատարագ ի տանի սբոց հրեշտակապետացն՝ Գաբրիէլի եւ Միքաէլի զամենայն եկեղեցիքս անխափան...» (Ղաֆաղարյան, 1963, 205): Արձանագրությունները ցույց են տալիս, որ Տփղիսի ավագերեց Տերտերը սերտ կապերի մեջ էր Հաղբատի հետ: Նրա ծանրակշիռ դիրքի մասին է վկայում նաև Հաղբատի Հովհաննես եպիսկոպոսի հետ պատարագ վարելը: Հետևապես կասկածից վեր է, որ տփղիսաբնակ ծաղկող Զաքարիայի հայր ավագերեցը նույնական է Հաղբատի վանքի արձանագրություններում հիշատակվող նույնանուն ավագերեց Տերտերի հետ: Հարկ է նշել, որ Զաքարիա ծաղկողի նկարագարողումները որոշակիորեն կրում են Սանահին-Հաղբատ մանրանկարչական դպրոցի կնիքը: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև Զաքարիայի հոր՝ Տերտեր ավագերեցի սերտ առնչությունները Հաղբատի վանքի հետ՝ կարելի է ենթադրել, որ Զաքարիան հենց այստեղ է սովորել մանրանկարչական արվեստը:

Լ. Խաչիկյանի ճշգրտմամբ Ավետարանը արտագրվել է 1296 թ. Սուրբ-Մարիի վանքում (Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան, 1991, 731)<sup>1</sup>, իսկ 4 տարի հետո նկարաբազարդման է բերվել Տփղիս (Հիշ. ԺԳ, 1950, 865): Վերջինիս հետ համակարծիք է նաև Պ. Մուրադյանը (Մուրադյան, 2009, 264): Սակայն ըստ Ա. Գևորգյանի՝ ձեռագիրը նկարագարողվել է 1300 թ. ոչ թե Տփղիսում, այլ Սուրբ Մարիի վանքում Տփղիսի բնակիչ Զաքարիայի կողմից (Геворкян, 1979, 156): Աղբյուրների բացակայության պայմաններում դժվար է հստակորեն նշել, թե որտեղ է նկարագարողվել Ավետարանը: Սակայն քննարկվող ժամանակաշրջանի Տփղիսի հայ մանրանկարչական արվեստի վերելքը թույլ է տալիս կարծելու, որ այն նկարագարողման է բերվել հենց Տփղիս:

XIV դարի երկրորդ կեսին Տփղիսում է հաստատվել նաև կիլիկյան դպրոցի ինքնատիպ մանրանկարիչներից մեկը՝ Ավագ ծաղկողը: Նա պատկանում է այն արվեստագետների թվին, որը և՛ գրել, և՛ ծաղկել, և՛ կազմել է ձեռագրերը (Սարգսյան, 2015, 73-88): Նրա գրչին է պատկանում 1358 թ. Տփղիսում Սարղաթմիշին և նրա ամուսնուն նվիրած ձեռագիրը (ՄՄ, ձեռ. Հ<sup>US</sup> 6230): Հռչակավոր Ավագ նկարիչ՝ Տփղիսում լինելու փաստը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ XIV դարասկզբի մանրանկարչական արվեստը բավականին բարձր դիրքերի վրա էր:

<sup>1</sup> Արարատյան գավառ, այժմ Սուրմալի գյուղ:

XV դարում ասքի ընկնող մանրանկարիչներից էր Մանուելը: Ա. Գևորգյանը հիմնականում Մանուելի նկարազարդած պատկերները ներկայացնում է որպես Թիֆլիսի հայկական մանրանկարչության դպրոցի աշխատանքներ, իսկ վերջինիս՝ տփղիսաբնակ (Геворкян, 1979, 156): Հետազոտողներից Ս. Բեգլարյանի ճշգրտամբ Մանուելը, ստեղծագործելով Թիֆլիսում, կիրառել է այն պատկերագրությունը, որը հատկապես օգտագործում էին Վանի շրջանում ստեղծագործող մանրանկարիչները, ուստի նա թե՛ ոճի և թե՛ իր կիրառած պատկերագրության տեսանկյունից պատկանում է Վասպուրականի դպրոցին (Բեգլարյան, 2016, 82-106): Ըստ այդմ՝ Տփղիսում Մանուելի նկարազարդած ձեռագրերը (ՄՄ հմ<sup>Բ</sup> 5784, 6260, 6806, 7986) կարելի է համարել Վան-Վասպուրականի մանրանկարչական դպրոցի և Տփղիսի հայկական դպրոցի մշակութային կապի արդյունք:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանի կրթօջախների ու Վրաստանում գտնվող հայկական կենտրոնների սերտ կապերի մասին են փաստում նաև Գորի քաղաքում գրված ձեռագրերը: 1469 թ. Գորիի Սուրբ Աստվածածին կաթողիկե եկեղեցում գրի առած ձեռագիր հիշատակարանում վկայված է, որ Գրիգոր գրիչը «ի գեղաքաղաքս Գորի» եղել է Հաղբատում, որտեղ Ղուկաս արքեպիսկոպոսը «բազում սիրով ընկալաւ զմեզ (Գրիգորին և Վրաստանից եկած մյուս հյուրերին) ի յարկս իւր և մխիթարէր զմեզ առատապէս...» ընդունելության (Յուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց, 1980, 317-318): Հետաքրքիր է, որ եկեղեցու հոգևոր այրերին թվարկելուն զուգահեռ Գրիգորը հիշատակում է իր աշակերտին՝ Մարտիրոս դպիրին, որը «բազում աշխատութեամբ ծառայէր մեզ, և ձեռնատու լինէր ի գործ արուեստիս» (Յուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց, 1980, 317-318): Կարելի է ենթադրել, որ «ձեռնատու լինէր ի գործ արուեստիս» արտահայտությունը մանրանկարչական արվեստի մասին է, որին տիրապետել է Մարտիրոսը: Ավելին, Գրիգոր Գորեցին հիշատակում է Մարտիրոսին՝ որպէս իր աշակերտի, ինչը կարող է վկայել Սուրբ Աստվածածին կաթողիկե եկեղեցում գործող գրչակենտրոնի մասին: Այս մասին է փաստում նաև, այն որ Գորիի գրիչները ձեռագրեր էին գրում նաև Քարթլիում գտնվող հայկական այլ եկեղեցիների համար: Այսպէս՝ 1469 թ. Գորիում գրվում է մի ձեռագիր, որն ուղարկվում է «Բերծու» (Յուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց, 2013, 128)<sup>1</sup> գյուղ՝ «ի դուռն սուրբ Լուսավորչին» (Հիշ., ԺԵ, Բ, 1958, 391-392): Ուշագրավ է, որ գորեցիների կապը չի սահմանափակվել միայն Հաղբատ-Մանահին վանքերի հետ, այլև, ըստ 1406 թ. ձեռագիր հիշատակարանի, «Գրիգոր արեղայի Վրացսանեցին, որ է գեղաքաղաք Գորի» մեկնել է Տաթև վանք և այստեղ արտագրել մի ձեռագիր (ՄՄ, ձեռ. Հ<sup>ՍՏ</sup> 4047): Վրացահայ միջավայրի և Գլաձորի ավելի վաղ կապերի մասին է վկայում 1317 թ. Գլաձորում գրված մի ձեռագիր հիշատակարան: Ձեռագրում Կարապետ գրչի կողմից ընդգրկվել են գրական վրացերենով տարատեսակ գրություններ: Պ. Մուրադյանը, ենթարկելով դրանք լեզվաբանական քննության, իրավացիորեն հետևություն է անում, որ Կարապետ գրիչը վրացական միջավայրին մոտ կանգնած կամ հենց այդտեղ ապրած գրիչ էր, որը հետագայում գործել է Գլաձորում (Мурадян, 1979, 95):

Ուշագրավ է, որ Վրաստանում հայ հոգևոր այրերը սերտ առնչություններ են ունեցել նաև Երուսաղեմում գտնվող հայ հոգևորականների ու գրչօջախների հետ: 1436 թ. Կրծանիս

<sup>1</sup>Ներկայում՝ *Բրեժա* (գյուղ Վրաստանում՝ Քարելիի շրջանում): Ընդգրկված է Շիդա- Քարթլի երկրամասի մեջ:

գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում գրված ձեռագիր հիշատակարանում վկայված է, որ եկեղեցու քահանա Հովհաննեսի ուղեկցությամբ հոգևոր այրերը մեկնում են Երուսաղեմ. «Ապա գնացաք ի տեղիքն երախտեաց՝ Երուսաղեմ, եւ համբուրեցինք զՍուրբ Գերեզմանն, եւ այլ ամենայն Սուրբ տնաւրինականքն: Հետ գալն՝ ի Դմրշխ այգ գրոցս թուխթն եւ այլ գրանաց առաք, եւ եկաք բերաքի Վրացտուն» (ՄՄ 4117,293v-295v, Հիշ. ԺԵ, Ա, 1955, 461-463): Հանդիպումը Երուսաղեմում հայ հոգևոր այրերի հետ կարող է վկայել հոգևոր-մշակութային կապերի մասին: Պատահական չէ, որ ստորև քննարկվելիք Տփղիսում կառուցվելիք Բերդեհեմի հայկական եկեղեցու շինարարության համար հող է բերվում հենց Երուսաղեմից (Մուրադյան, 2009, 143-146):

Հարկ է նշել, որ վրաց հետազոտողների կողմից Կրծանիս Սուրբ Աստվածածին եկեղեցին ևս համարվում է վրացական: Վրաց հետազոտող Ա. Աբդալաձեն ձեռագրում հիշատակվող «...ընդ հովանեաւ կաթողիկէ Սուրբ Աստուածածնիս» արտահայտությունը թարգմանել է ընդ հովանու կաթողիկէ Սբ. Աստվածածնիս (ՄՄ 4117,293v-295v, Հիշ. ԺԵ, Ա, 461-463): Թե ինչպես է հեղինակը «կաթողիկէն» (ս. սծօսլածօ, 1978, 49) թարգմանել «կաթողիկ», հայտնի չէ: Նրան շարունակելով՝ Բ. Արվելաձեն պնդում է, որ քննարկվող ժամանակաշրջանում Կրծանիսում հայկական եկեղեցի չի եղել (Арвеладзе, Армянские или грузинские церкви в Грузии): Հեղինակը հիմք է ընդունում Պ. Իոսիլիանիի վկայությունը, թե իբր եկեղեցին սկզբում եղել է վրացական և անհայտ պայմաններում ավելի ուշ շրջանում անցել հայերի ձեռքը:

Նախևառաջ դիմենք ձեռագիր հիշատակարանին. «Յիշեցէք զՍարգիս արեղէն Տփիսե[ա]յց Կաթողիկին աւագերեցն... այլեւ զհամշիրայ հոգեւոր եղբայրքն իմ՝ զՅորդանան արեղայն եւ զՍտեփաննոս քահանայն Կրծանեցին...: Քանզի անարժանս Յոհաննէս՝ անուամբ եւ ոչ գործաւքքահանայ, ըստացայ զսա...» (ՄՄ 4117, 293v-295v, Հիշ. ԺԵ, Ա, 461-463): Վերոնշյալից ակնհայտ է, որ եկեղեցին ունեցել է քահանա՝ հանձին Ստեփանոսի, ավելին՝ նրա կողքին հիշատակվում է արդեն իսկ մեր կողմից վերը անդրադարձած Սուրբ Աստվածածին եկեղեցու նշանավոր քահանա ու փիլիսոփա Սարգիսը:

Հիշատակարանի «զհամշիրայ» (համշիրակ) բառը նշանակում է «համերկրացի», այսինքն՝ Սարգիս արեղան և մյուս երկուսը ծնունդով նույն վայրից էին: Մեկ եկեղեցում երեք հայ քահանաների՝ Հովհաննեսի, Հորդանանի, Ստեփանոսի ներկայությունը վկայում է, որ եկեղեցին ունեցել է բավական թվով հայ սպասավորներ: Հետևապես Կրծանիսի Սուրբ Աստվածածին կաթողիկէ եկեղեցու հայկական հոգևոր կենտրոն լինելու փաստը անվիճարկելի է:

Հետաքրքրական է, որ Վրաստանում հայոց եկեղեցու սպասավորները հաղորդակցության մեջ են եղել Արագածոտնի գավառում գտնվող հայոց միջնադարյան նշանավոր վանքերից մեկի՝ Հովհաննավանքի հետ (Ղաֆադրյան, 1948, 9-55): Ըստ 1344 թ. գրված «Սարգիս Շնորհալի. մեկնութիւն կաթողիկեայց թղթի» ձեռագրի հիշատակարանի՝ ձեռագիրը գրվելուց հետո «ընծայեաց զսա մեծ՝ եւ հռչակաւոր մայրաքաղաքին Տրփիսեաց ի միաբանական եղբայրանոցն, որք ըստ Եզնկական վարուց կարգեալ կան...» (Հիշ., ԺԴ, Ա, 2018, 323-327): Փաստորեն՝ Վրաստանում հայկական թեմի ներկայացուցիչները ձեռագրեր էին պատվիրում նաև Հովհաննավանքում, որը ժամանակի նշանավոր կրթամշակութային կենտրոնն էր: 1200 թ. Հովանավանքի արձանագրություններից մեկից իմանում ենք, որ Զաքարե և Իվանե եղբայրները վանքին պատկանող բոլոր կալվածքները ազատել են տուրքերից և նոր նվիրատվություններ արել (Ղաֆադրյան, 1948, 76): Հավանաբար հենց

քննարկվող ժամանակաշրջանից էլ սկիզբ են առնում Վրաստանում հայկական թեմի ու Հովանավանքի փոխառնչությունները:

**Հայկական նորակառույց եկեղեցիները Տփղիսում:** XIV-XV դարերի ընթացքում հայ բնակչության ստվարացումը նպաստում էր նոր եկեղեցիների կառուցմանը, որտեղ կազմակերպվում էր հայության հոգևոր-մշակութային կյանքը: Ըստ ավանդության՝ եկեղեցիներն ու նրանց կից կրթօջախները հովանավորում էին ժամանակի հեղինակավոր տներն ու հոգևոր պետերը: Բացառություն չէր նաև Տփղիսում հայկական հնագույն եկեղեցիներից մեկի՝ Հարանց վանքի (կոչվում է նաև Փաշիվանք) (Մուրադյան, 2009, 86-90, Հասարթյան, 2009, 67-75) կառուցումը: Այս առումով եզակի է 1432 թ. Կարապետ գրչի գրած ձեռագիր հիշատակարանը (ՄՄ, ձեռ. 9223, ԺԲ պատահիկ, Հիշ. ԺԵ, Ա, 1955, 420-421): Ըստ ձեռագրի՝ վանքը կառուցվել է Փաշա անունով հայազգի մի պարոն, որը սերում էր «Մալաղենց» տոհմից: «Մուլաղ» («ձախ կողմ») բառը բարբառային է, լայն տարածում է ունեցել և շարունակում է ունենալ Ջավախահայերի շրջանում: Նույն ձեռագրում հիշատակվում է, որ վանքում նստում էր Փաշայի որդին՝ Հովհաննես արքեպիսկոպոսը: Թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի հիշատակումը փաստում է Փաշիվանքի առաջնորդանիստ լինելու մասին: Շ. Շարդենը 1672-1673 թթ. Թիֆլիսում գտնվելու ժամանակ նշել է. «Հայկական գլխավոր եկեղեցիներից է Փաշավանքը: Թիֆլիսի հայ եպիսկոպոսը նստում է այս վանքում» (Մարքեն, 1902, с. 202-201): Սակայն պետք է նկատել, որ Հաղբատի ու Վրաստանում հայկական թեմի առաջնորդները նստում էին Մուրք Աստվածածին, այսինքն՝ Մեյդանի Մուրք Գևորգ եկեղեցում: Ուշագրավն այն է, որ XVI դարում Սանահինի ու Վրաստանում հայկական թեմի առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսը նստում էր Փաշիվանքում (Մուրադյան, 2007, 82-83): Այս ամենի վրա լույս է սփռում Սիմեոն Երևանցու հիշատակությունը, որը Փաշիվանքը ներկայացնում է որպես քաղաքի էջմիածնապատկան եկեղեցին: Հայտնի է, որ էջմիածնի կաթողիկոսարանը մշտապես բարեխնամ էր Սանահինի նկատմամբ: Նույնական վերաբերմունք չէր դրսևորվում Հաղբատի նկատմամբ, որ դեռևս XII դարից վրաց թագավորների հովանու ներքո էր (Մելիքյան, 2021, 37-49): Ըստ այդմ՝ պարզ է, որ Փաշիվանքը դարձել էր Տփղիսում Սանահինի վանքի առաջնորդարանը: Վանքի համալիրի մեջ էին մտնում նաև վանահոր երկհարկանի շենքը, բնակելի սենյակները, եռահարկ զանգակատունը, պարիսպը (Ջալալեանց, Ա, 1853, 59): Եկեղեցուց դեպի արևմուտք կառուցում են եռազմբեթ ու երեք սեղան ունեցող եկեղեցի՝ իբրև ընդօրինակում Սանահինի վանքի 1211 թ. եռանավ ժամատան-նախագավթի (Մելիքսեթ-Բեկ, 1958, 277): Հետաքրքրական է, որ Սանահինի վանքի զանգակատան պատին XVI դարի (1520 թ.) մի արձանագրության համաձայն՝ Դավիթ աբեղան, որը վերանորոգում է ջրաղացը, իրեն հիշատակում է որպես պարոն Մուլաղի որդի: Ինչպես վերը նշվեց, «սուլաղ» վրացերենում բարբառային բառ է, հետևապես մեծ է հավանականությունը, որ պարոն Մուլաղը ծագում էր Վրաստանի հայկական միջավայրից: Հարկ է նշել, որ հրապարակում եղած աղբյուրներում Մուլաղ անունը հիշատակվում է միայն երկու վայրում՝ վերոնշյալ ձեռագիր հիշատակարանում ու Սանահինի արձանագրությունում: Հետևապես մեծ է հավանականությունը, որ արձանագրությունում հիշատակվող պարոն Մուլաղի որդի Դավիթ աբեղան ևս սերում էր XV դարում Փաշիվանքը կառուցած Մուլաղենց մեծանուն տոհմից:

Լ. Խաչիկյանն առանց մեկնաբանման վերոնշյալ ձեռագրի գրչին՝ Կարապետին, նույնացրել է XV դարում գործող Վասպուրականի դպրոցի նշանավոր ներկայացուցիչ գրիչ-մանրանկարիչ Կարապետ Աղթամարեցու հետ (Գևորգյան, 1988, 285): Այսպիսով, ինչպես 1432 թ., այնպես էլ 1437/1438 թ. Տփղիսում գրված ձեռագիր հիշատակարաններում Կարապետը խնդրում է հիշել իր ծնողներին՝ «գՊետրոս քահանյ և զՇնորհաւոր, և զեղբայրն իմ զՅովանէս, և զքեռն իմ Սուլատան»: Սակայն ըստ XV դարի ձեռագիր հիշատակարանի՝ Կարապետ Աղթամարեցու ծնողներն են «ըզՀովհանէս, եւ Շարմէլիք» (ՄՄ, ձեռ. Հ<sup>ՍՏ</sup> 5181, 208): Ակնհայտ է, որ երկու Կարապետների նույնացումը անհնար է դառնում: Հետևապես կարելի է համարել, որ 1432 թ. և 1437/1438 թ. ձեռագրերի գրիչ Կարապետը, բոլորովին այլ Տփղիսի հայկական գրչօջախի ներկայացուցիչ է:

Տփղիսի հայկական հնագույն եկեղեցիների շարքին է պատկանում Բեթղեհեմի Սուրբ Աստվածածինը: Եկեղեցու վերաբերյալ հնագույն հիշատակությունը 1437/1438 թվականից է. «... Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբն Աստուծոյ կատարեցի զսուրբ գիրքս, որ կոչի Գանձարան: Գրեցաւ սայ ի թվականութիւնս Հայոց ՊՁԶ (1437), և ի փոքր թվականութիւնս ՅՕԴ. (1438), և ի Հռոմոնցն ՌՃԶԹ (1437) ի թագաւորութիւն Վրաց Ալէքսանդրու, ի մայրաքաղաքս Տփղիս, ի յանապատս Բեղդահէմ, ի դրան Սուրբ Աստուածածնիս, ձեռամբ սուտանուն արեղայի Կարապետի...» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, 1984, 293): Ինչպես նկատում է Պ. Մուրադյանը, եկեղեցու կառուցումը 1437/1438 թվականից առաջ պետք է լիներ (Մուրադյան, 2009, 69): Բեթղեհեմի եկեղեցու շինարարության մասին տեղեկություն է պահպանվել տեր Հովհաննեսի և տեր Մխիթարի՝ 1816 թ. հունվարի 28-ին գրված տեղեկանքում (Մուրադյան, 2009, 143-146): Ըստ այդ տեղեկության՝ նախապես կառուցվել է մատուռ, որի կիսակատարության հասցնողը տեր Բարսեղի պապ տեր Գրիգորն է: Վերջինիս թոռ տեր Բարսեղը ավարտել է շինարարությունը: Բեթղեհեմ է կոչվել, որովհետև տեր Գրիգորը Երուսաղեմի Բեթղեհեմից հող է բերել և օգտագործել շինարարության համար, ինչը հնարավոր էր՝ հաշվի առնելով Վրաստանում հայկական թեմի ներկայացուցիչների ու Երուսաղեմի հայկական թեմի վերը նշյալ կապերը: Նրանց հաջորդ սերունդները՝ նույնանուն Բարսեղն ու Գրիգորը, «... մեծ եկեղեցւոյ հիմն մասնաւորապէս իցեն արկեալ. և յայնժամ մեծ մահ իցէ անկեալ ի մէջ քաղաքիս, և սոքա ևս այնուիցեն մահացեալ: Եւ այսպէս կիսակատար մնացեալ իցէ եկեղեցին մինչ ի յառաջանալ Տէր Սարգսին...» (Մուրադյան, 2009 143-146): Իրավացի է Պ. Մուրադյանը, երբ նկատում է, որ խոսքը վերաբերում է տարբեր ժամանակներում կատարված մատուռի ու եկեղեցու շինարարությանը: Վրաց հետազոտող Բ. Արվելաձեն տեր Հովհաննեսի ու տեր Մխիթարի տեղեկանքը դիտում է հայոց եկեղեցու կողմից եկեղեցիների յուրացման միջոց (Арвеладзе, Армянские или грузинские церкви в Грузии?!): Ըստ նրա՝ եկեղեցու հիմքը դրել է Վախթանգ Գորգասալը: Հետազոտողը հիմք է ընդունում Պ. Իոսիլիանիի պնդումը, որ եկեղեցին սկզբում եղել է վրացական, ապա անցել է հայերի ձեռքը՝ չհիմնավորելով երբ և ինչ պայմաններում: Նախնառաջ հարկ է նշել, որ Պ. Իոսիլիանին մեծ մասամբ օգտվել է Վարխուշտի Բագրատիոնիի աշխատությունից, որում էլ հենց նշված է տվյալ տեղեկությունը: Չնսեմացնելով Վարխուշտիի երկը՝ որպես հայոց պատմության սկզբնաղբյուր նշենք, որ «Հին



պատմությունը» չունի առաջնակարգ սկզբնաղբյուրի արժեք<sup>1</sup>: Բեթղեհեմի եկեղեցում վրացական արձանագրությունների բացակայությունը Բ. Արվելաձեն բացատրում է «Թեմուր-Լենկի զորքերի կողմից բարբարոսության հետևանք»։ Վրաց հետազոտողը, ընկնելով ծայրահեղության գիրկը, նույնիսկ Քարթլի-Կախեթի նշանավոր քաղաքական գործիչ Գիվի Ամիլխավիի (1689-1754) օժանդակությամբ Բեթղեհեմի եկեղեցու վերականգնումը դիտում է որպես քայլ այն վրացիներին վերադարձնելու համար: Ըստ նրա՝ վրաց քաղաքական գործիչը չէր կարող այդքան ծախսեր անել հայկական եկեղեցին վերականգնելու համար: Սակայն Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող 1679 թ. վրացերեն վավերագիրը, որը չի ուսումնասիրվել վրաց հեղինակի կողմից, վկայում է հայ հոգևորականների նկատմամբ Գիվի Ամիլխավիի բարյացակամ վերաբերմունքը (ՄՄ, թղթ. 252, վավ.8): Ըստ վավերագրի՝ Գիվի Ամիլխավին Գորիի հայ հոգևորականներին դարձնում է ապահարկ, ուստի նա, անկասկած, կարող էր նաև խոշոր գումար տրամադրել Բեթղեհեմի եկեղեցու վերականգնման համար: 1701 թ. Տփղիս այցելած ֆրանսիացի կենսաբան Ժոզեֆ-Պիտտոն Տուրնեֆոնի արձանագրմամբ «Թիֆլիսում կա շուրջ 20000 բնակիչ՝ 14000 հայ, 3000 հայ մահմեդական, 2000 վրացի և շուրջ 500 հռոմեադավան կաթոլիկ» (Полневтков, 1935, 186-187): Ուստի Տփղիսում մեծ թիվ կազմող հայերը իրենց գործուն մասնակցությունն ու կշիռը պետք է ունենային երկրի տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում, ինչն ավելի ակնհայտ դարձավ XVIII դարի երկրորդ կեսին (Մարտիրոսյան, 1974, 65-70): Ավելին, 1641 թ. ձեռագիր հիշատակարանից (Հիշ., ԺԷ, Գ, 1984, 28-29) իմանում ենք, որ Բեթղեհեմի մեծ եկեղեցին սերտ առնչություններ ուներ Շանշիանների (Мурадян, 1988, 119-120) հայ իշխանական տոհմի ներկայացուցիչների հետ: Ուշագրավ է նաև, որ Սեմեոն Երևանցին Բեթղեհեմի (1710-1780 թթ.) եկեղեցին հիշատակում է հաղբատապատկան եկեղեցիների շարքում (Սիմեոն կաթողիկոս Երևանցի, 2003, 69): Ինչպես հայտնի է, Հաղբատը մշտապես եղել է վրաց իշխանությունների հոգատարության տակ: Ըստ այդմ՝ Գիվի Ամիլխավիի կողմից հայկական եկեղեցու վերականգնումը կարելի է դիտել որպես հայկական միջավայրում համակրանք ստեղծելու ու սեփական դիրքերը ամրապնդելու ձգտում:

**Եզրակացություն:** Այսպիսով՝ XIV-XV դարերի ընթացքում նոր եկեղեցիների կառուցումը Վրաստանում հայկական գաղթօջախի հոգևոր-մշակութային ու կրթական կյանքի բարձր մակարդակի զարգացման վառ վկայությունն էր: Հրապարակում եղած հայկական նկարագրող ձեռագրերը, փաստում են, որ XIV-XV դարերում Տփղիսում հայկական մանրանկարչական դպրոցն իր դիրքերով չէր զիջում հայաստանյաց այլ հռչակավոր կենտրոններին: Հայկական մշակույթը Վրաստանում զարգանում էր Հայաստանի, ինչպես նաև մյուս երկրների հայկական գաղթօջախների հոգևոր, մշակութային ու կրթական կենտրոնների հետ համագործակցության և փոխառությունների արդյունքում:

<sup>1</sup>Այս մասին մանրամասն տե՛ս Կ. Դավիթ, Վախուշտի Բագրատիոնիի «Վրացական թագավորության նկարագրությունը» աշխատությունը որպես հայոց պատմության սկզբնաղբյուր, ատենախոսություն, Երևան, 2020:

## Գրականության ցանկ

**Աղայան Ղ. (1976)**, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան հրատ.», 1642 էջ:

**Ասատրյան Ա. (2016)**, Սողուն Սուրբ Գևորգ և Սուրբ Նշան եկեղեցիները (պատմություն և տարեգրություն), հրատ. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 367 էջ:

**Ավյան Ս. (1959)**, Թբիլիսիի մեյդանի Սբ. Գևորգ կաթողիկե Սուրբ Աստուածածին կամ Բերդի մեծ եկեղեցի, «Էջմիածին», փետրվար, էջ 46-57:

**Բեգլարյան Ս. (2016)**, ԺԵ դարում ստեղծագործած Մանուել մանրանկարչի ՄՄ հմ՞ 5784 ձեռագիրը, «Էջմիածին», հ. ԺԳ, էջ 81-106:

**Գևորգյան Ա. (1998)**, Հայ մանրանկարիչներ, Մատենագիտություն IX-XIX դդ., հրատ. Կահիրե, 822 էջ:

ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս I (1401-1450) (1955), կազմեց՝ Խաչիկյան Լ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 818 էջ:

ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս II (1487-1500) (1958), կազմեց՝ Խաչիկյան Լ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 597 էջ:

ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1950), կազմեց՝ Խաչիկյան Լ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 987 էջ:

ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. III (1641-1660) (1984), կազմեց՝ Հակոբյան Վ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1014 էջ:

Ցիշատակարան Սանահնոյ վանից (2007), աշխատասիր. Պ. Մուրադյանի, Էջմիածին, հրատ. Մայր աթոռ Էջմիածնի, էջ 331:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մաս Ա. (1301-1325) (2018), կազմողներ՝ Խաչիկյան Լ., Մաթևոսյան Կ., Ղազարոսյան Ա., Երևան, Մեսրոպ Մաշտոցի Մատենադարան, Նաիրի հրատ., 640 էջ:

Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները (1963), աշխատասիր. Կ. Ղաֆադարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հայաստանի պետական թանգարան, 292 էջ:

**Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., (1991)**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. IV, ԵՊՀ հրատ., 804 էջ:

**Հասրաթյան Մ. (2009)**, Թբիլիսիի հայկական եկեղեցիների ճարտարապետությունը, «Էջմիածին», էջ 67-85:

Հովհանավանքը և նրա արձանագրությունները (1948), աշխատասիր. Կ. Ղաֆադարյանի, Երևան, Հայաստանի պետական թանգարան, 120 էջ:

Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան (1984), կազմեց՝ Անուշաւան վարդապետ Դանիելեան, Անթիլաս-Լիբանան, Տպարան կաթողիկոսի մեծն տանն Կիլիկիո, 293 էջ:

**Մարտիրոսյան Վ. (1974)**, Հայերը Քարթլի-Կախեթի տնտեսական կյանքում (XVIII դ. երկրորդ կես), «Լրաբեր հասարակական գիտությունների», N 11, էջ 20-26 :

**Մելիքսեթ-Բեկ Լ. (1958)**, Հին Թբիլիսիի եւ հայ-վրացական կուլտուրական կապերի պատմությունից, «Պատմաբանասիրական հանդես», N 3, էջ 152-160:

**Մելիքյան Լ. (2021)**, Հայոց եկեղեցին և հայերը Վրաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում (X-XIII դդ.), «Հայագիտության հարցեր» 3(24), էջ 37-49:

ՄՄ վավ. 8, թղթ. 252:

ՄՄ ձեռ. 5181, թ. 208:

ՄՄ ձեռ. 7951:

ՄՄ ձեռ. 5476, թ. 126 r:

ՄՄ ձեռ. 6230:

ՄՄ ձեռ. 4047:

ՄՄ ձեռ. 9223, ԺԲ պատասիկ:

Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան (1858), աշխատասիր. տեառն Սարգսի Սանահնեցոյ Ջալալեանց թեմակալ արքեպս. Հայոց Վրաստանի, Իմերեթի եւ այլոց, մասն Բ, Տփիսիս, ի տպարանի Ներսիսեան հոգևոր դպրոցի, 517 էջ:

**Մուրադյան Պ. (2009)**, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, հրատ. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 400 էջ:

**Սարգսյան Լ. (2015)**, Մանրանկարիչ Ավագ (կյանքը և ձեռագրական ժառանգությունը), «Բանբեր Սատենադարանի», N 22, էջ 121-136:

**Միսեոն կաթողիկոս Երևանցի (2003)**, Ջամբո, Երևան, Մուղնի հրատ., 607 էջ:

Ցուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց (1980), Բանբեր Սատենադարանի, N 13, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 298-299:

**Matevosyan K., Avetisyan A. (2015)**, Surb Gevorg Cathedral. The Frescoes, «Nushikyan» print pub., 303 p.

**Амиранашвили III. (1925)**, *Древности Тифлиса*, Тифлис и его окрестности. Путеводитель, изд-во «Церкумси», 188 с.

**Арвеладзе Б. (1996)**, «Армянские» или грузинские церкви в Грузии?!, Тбилиси, <https://www.allgeo.org/index.php/ru/641-bondo-arveladze-armyanskie-ili-gruzinskie-tserkvi-v-gruzii> (18/7/2022):

**Асратян М. (1978)**, Памятники средневековой армянской архитектуры в Тбилиси, изд-во АН АрмССР, 24 с.

**Геворкян А. (1979)**, Армянские средневековые миниатюристи из Тбилиси, Кавказ и Византия, N 1, с. 156.

**Мурадян П. (1979)**, Грузинские приписки и записи в армянской рукописи 1317 г. из Гладзора, Кавказ и Византия, N 1, с. 95.

**Полиевктов А. (1935)**, Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу, изд-во «Заря Востока», 152 с.

**Шарден Жан (1902)**, Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг. 1902, пер. Е. В. Бахутовой и Д. П. Носовича, Тифлис, Скоропечатня М. Мартиросянца, 301 стр.

**აბდალაძე ა. (1978)**, სომხურ ხელნაწერთა XIV-XV საუკუნეების ანდერძების (ჰიმატაკარანების) ცნობებისა ქართველოს შესახებ, რედ.საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემია, 199 გვ.

გამყრელიძე გ., მინდორაშვილი დ., ზრავაძე ზ., კვაჭაძედასხვ მ. (2013), *ქართლის ცხოვრების ტოპოარქეოლოგიური ლექსიკონი*, რედ. და პროექტის ხელმძღვ. გელა გამყრელიძე. საქ. ეროვნ. მუზეუმი, 740 გვ.

### References

**Abdaladze A. (1978)**, Somxur Xelnatserta k'artvelos shesakheb, red. Sak'artvelos SSR mecnierebata academia, 199 gv. **(in Georgian)**

**Aghayan Gh. (1976)**, Ardi hayereni bacatrakan bararan, hrat. «Hayastan», 1642 ej: **(in Armenian)**

**Arvekadze B. (1996)**, «Armjanskije» ili gruzinskije cerckvi v Gruzii?! <https://www.allgeo.org/index.php/ru/641-bondo-arveladze-armjanskije-ili-gruzinskije-tserkvi-v-gruzii> (18/7/2022): **(in Russian)**

**Asatryan A. (2016)**, Moghnu Surb Gevorg ev Surb Nshan ekegheciner... (patmutyun ev taregrutyun), hrat. Mayr Ator S. Echmiadzin, 367 ej. **(in Armenian)**

**Asatryan M. (1978)**, Pamjatniki srednevikovoj armjanskoj arxitektury v Tbilisi, izsh-vo AN ArmSSR, 24 s. **(in Armenian)**

**Avchyan S. (1959)**, Tbilisii Meydani Sb. Gevorg katoghike Surb Astuatsatsin kam Berdi mets ekegheci, Edzmiatsin, petrvar, ej. 46-51.

**Beglaryan S. (2016)**, ZhE darum steghdzagordzadz Manuel manrankarchi MM hm<sup>r</sup> 5784 dzeragir, Edzmiatsin, hat. Zh 'G', ej 81-106: **(in Armenian)**

Chanaparhordutyun i Metsn Hayastan 1858, ashxatasir. Tearn Sargsi Sanahnevoy Jalaleanc temakal arqeps. Hayots Vrastani, Imereti ev aylots, masn B, Tpkhis, I tparani Nersisean Hwgevor Dproci, ej. 517: **(in Armenian)**

Eishatakarani Sanahnoy vanits (2007), ashkhatasiru. Muradyan P., Edzmiadzin, Mayr ator Edzmiadzini hrat., ej. 331: **(in Armenian)**

**Gamghkrelidze G., Mindorashvili D., Bragvadze Z., Kvachamedasxv M. (2013)**, kartlis ckhovrebis topoarkeologiuri leksikoni, red. Da proektis khelmdzv. Gela gamghkrelidze. Saq. erovn. Muzeumi, 740 gv. **(in Georgian)**

**Gevorgyan A. (1979)**, Armjanskije srednevikovye miniatjuristi iz Tbilisi, Kavkaz I Vizantiya, N 1, ej.156. **(in Armenian)**

**Gevorgyan A. (1988)**, Hay manrankarichner, Matenagitutyun IX-XIX dd., Kahire .... ej. 822.

Haghbat. chartarapetakan karutsvatcqnerp and vimakan ardzanagrutyunnerp (1960), ashxatasir.

**Hakobyan T. Kh., Meliq-Bakhshyan St. T., Barseghyan H. Kh. (1991)**, Hayastani ev Harakts shrajanneri teghanunneri bararan, ht.4, hrat. Yerevani petakan hamalsaran, 4817 ej: **(in Armenian)**

**Hasratyan M. (2009)**, Tbilisii haykakan ekeghecineri chartarapetutyuny, Edzmiatsin, ej. 67-85: **(in Armenian)**

Hayeren dzeragreri hishatakaranner, ZHD dar mas A (1301-1325) (2018), kazmoghner` Khachikyan L., Matevosyan K., Ghazaryan A., Yerevan, Mesrop mashtoci matenadaran, «Nairi» hrat., 640 ej. **(in Armenian)**

Hovahanavanq. ev nra ardzanagrutyunnery (1948), ashxatasir. K. Ghafadaryani, Yerevan, HSSH GA Hayastani petakan t'angaran, 120 ej: **(in Armenian)**

K.Ghafadaryani, Yerevan, HSSH G09A Hayastani petakan t'angaran, 292 ej. **(in Armenian)**

**Պատմություն/ History**

**Armenian spiritual centers and their cultural activities in Georgia in the 14-15 th centuries**

**Հայկական հոգևոր կենտրոններն ու դրանց մշակութային գործունեությունը  
Վրաստանում XIV-XV դարերում**

**Martirosyan V. (1974)**, Hayer... Qartli-Kakheti tntesakan kyanqum (XVIII դ.erkroord kes),  
Lraber hasarakakan gitutyunneri, , N 11, ej 20-26: **(in Armenian)**

Mayr cucak hayeren dzeragracts Metsi Tann Kilikioy katoghikosutyean **(1984)**, kazmets`  
Anushavan vaedapet Danielean, Antilas-Libanan, Tparan katoghikosi mets tann Kilikio, 293 ej: **(in Armenian)**

**Melikset-Bek L. (1958)**, Hin Tbilisi ev hay-vratsakan kulturakan kaperi patmutyunic, Patma-  
banasirakan hands, N 3, ej. 152-160: **(in Armenian)**

**Melikyan L. (2021)**, Hayots ekexetsin ev hayer.. Vrastani social-tntesakan ev qaghaqakan  
kyanqum (X-XIII centuries), Hayagitutyant hartser 3(24), ej. 37-49: **(in Armenian)**

MM dzer. 5476, t. 126 r. **(in Armenian)**

MM dzer. 4047: **(in Armenian)**

MM dzer. 5181, t. 252: **(in Armenian)**

MM dzer. 6230: **(in Armenian)**

MM dzer. 7951: **(in Armenian)**

MM dzer. 9223, ZhB patarik. **(in Georgian)**

MM vav. 8. tght. 252: **(in Armenian)**

**Muradyan P. (1979)**, Gruzinskie piripiski i zapisi v armjanskoj rukopisi 1317 g. iz Gladzora,  
Kavkaz i Vizantiya, N 1, ej. 95. **(in Armenian)**

**Muradyan P. (2009)**, Hin Tiflisi hayoc ekegheciner@, hrat. Mayr Ator S. Edzmitsin, 400 ej: **(in Armenian)**

**Polievtkov A. (1935)**, Jevropejskie puteshestvenniki XIII-XVIII vv. Po Kavkazu izd-vo «Zarya  
Vostoka», 152 s. **(in Russian)**

**Sargsyan L. (2015)**, Manrankarich Avag (kyanqy ev dzeragrakan zharangutyuny) Banber  
Matenadarani, N 22 , ej. 121-136:

**Simeon kat'oghikos Yevanci (2003)**, Jambr, Yerevan, «Mughni» hrat. 607 ej: **(in Armenian)**

Tsutsak hayeren dzeragrats masnavor andzants **(1980)**, Banber Matenadarani, N 13, Yerevan,  
HSSH gitutyunneri akademiayi hrat., 298-299 ej: **(in Armenian)**

Zhan Sharden, Putishestvie Shardena po Zakavkazyu v 1672-1673 gg., Perv. E.V. Baxutovoy u  
D.P. Nosovicha, Tiflis, 1902 g., 301 str.. **(in Russian)**

Zhe dari hayeren dzeragreri hishataranner Mas I (1401-1450) **(1955)**, kazmets` Khachikyan  
L., Yerevan, HSSH GA hrat., 818 ej: **(in Armenian)**

ZhE dari hayeren dzeragreri hishataranner h. III Yerevan (1641-1660) **(1984)**, kazmets`  
Hakobyan V., Yerevan, HSSH GA hrat., 1014 ej: **(in Armenian)**

Zhe dari hayeren dzeragreri hishataranner II (1487-1500) **(1958)**, kazmets` Khachikyan L.,  
Yerevan, HSSH GA hrat., 597 ej: **(in Armenian)**

ZhG dari hayeren dzeragreri hishataranner **(1950)**, kazmets` Khachikyan L., Yerevan, HSSH  
GA hrat., 987 ej: **(in Armenian)**